

# «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ-ի բաժնետոմսերում ներդրումների իրականացման վերաբերյալ հարցեր և պատասխաններ

## **1. Ինչու՞ ձեռք բերել սովորական բաժնետոմս**

Գնելով սովորական բաժնետոմս՝ Դուք Ձեր դրամական միջոցները ներդրում եք ընկերության կապիտալում: Դառնալով բաժնետեր՝ Դուք ձեռք եք բերում մի շարք իրավունքներ՝

- Դուք իրավունք եք ստանում մասնակցելու ընկերության կառավարմանը. Ձեզ պատկանող յուրաքանչյուր բաժնետոմս տալիս է 1 ձայնի իրավունք:
- Եկամուտ (շահութաբաժին) ստանալու իրավունք: Ի՞նչ է դա նշանակում: Եթե ընկերությունը ստանում է շահույթ, նա որոշում է կայացնում դրա մի մասը բաշխել բաժնետերերի միջև. Ընկերության շահույթը Ձեր եկամտան է:
- Կապիտալի աճ: Դուք ներդրում եք արել աճի մեծ պոտենցիալ ունեցող ընկերությունում, որի արժեքը անընդհատ աճում է: Մեծանում է նաև Ձեր բաժնետոմսերի արժեքը. արդյունքում՝ ունենում եք կապիտալի հավելած: Վաճառել բաժնետոմսերը շուկայում և ստանալ եկամուտ (առքի և վաճառքի գների տարբերությունից), թե պահել դրանք հետագա աճի ակնկալիքով՝ Ձեր իրավունքն է:
- Նոր թողարկումների դեպքում նախապատվության իրավունք: Եթե Դուք արդեն Ընկերության բաժնետեր եք և վերջինս նոր թողարկում անելու որոշում է կայացրել, Դուք (որպես «գործող» բաժնետեր) կարող եք նախապատվության իրավունքով ձեռք բերել նոր բաժնետոմսերը, նախքան «նոր» բաժնետերերի շրջանում դրանք տեղաբաշխվելը:
- Ընկերության լուծարումից հետո մնացած գույքից մաս ստանալու իրավունք: Եթե ընկերությունը լուծարվի, պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքը համամասնորեն կբաշխվի բաժնետերերի միջև:

Ամեն դեպքում Դուք ունեք եկամտի մեծ պոտենցիալ, իսկ Ձեր ռիսկը (գումարը, որը կարող եք կորցնել) սահմանափակվում է Ձեր ներդրածի չափով:

## **2. Ինչ՞ պետք է անի ընկերությունը, որպեսզի մարդիկ գնեն և վաճառեն նրա բաժնետոմսերը**

Բաժնետոմսերը գրավիչ են, եթե Ընկերությունը ունի զարգացման հեռանկարային և իրատեսական ռազմավարություն, վայելում է հեղինակություն, հասարակությունը ունի բավարար տեղեկություններ ընկերության և նրա գործերի մասին, պաշպանված են բաժնետերերի շահերը՝ անկախ բաժնետոմսերի քանակից, ընկերությունը ղեկավարվում է հարուստ փորձ և բարձր որակավորում ունեցող անձանց կողմից:

## **3. Ինչու՞ «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ-ն դարձավ բաց բաժնետարական ընկերություն և հասարակությանը առաջարկեց ձեռք բերել իր բաժնետոմսերը**

«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ-ի միակ սեփականատիրոջ՝ ԼՂՀ կառավարության կողմից հասարակությանը բաժնետոմսերը վաճառելու մասին որոշման ընդունումը կապված էր ԼՂՀ անվտանգության բարձրացման և բնակչության կողմից լրացուցիչ եկամուտներ ստանալու գործոններով: Այս ծրագրի հաջող իրականացման դեպքում Ընկերությունը կարող է 100%-ով բավարարել ԼՂՀ-ի էլեկտրաէներգիայի պահանջարկը: Բաժնետոմսերի վաճառքի արդյունքում հավաքագրված միջոցները Ընկերությունը ծախսել է նոր ՀԷԿ-երի կառուցումը ֆինանսավորելու համար: Գործընթացը հաջողված է այն առումով, որ 6-8 ամիսների համար արդեն բաժնետերերին վճարել է 10% շահութաբաժին, ինչպես նաև շահագործման է հանձնվել Թրդի կասկադի 1-ին ՀԷԿ-ը:

#### **4. Ինչու՞ է գնել «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ-ի բաժնետոմսեր**

Շահագրգռվածությունը բացատրվում է նախ նրանով, որ բաժնետոմսերի ձեռք բերմամբ անհատը ստանում է շահութաբաժնի, իսկ հետագայում բաժնետոմսերի գների աճի տեսքով լրացուցիչ եկամուտ: Եկամուտի ստացումը կարող է երաշխավորվել շատ գործոններով: Նշենք մի քանի հիմնական գործոններ՝ օրինակ, Ընկերության արտադրանքը ստացվում է ջրային ռեսուրսներ օգտագործելու արդյունքում (որը վերկանգնվող բնական ռեսուրս է), Ընկերությունը չունի իրացման որևէ սահմանափակումներ և նրա գործունեությունը մրցակցությունից դուրս է, Ընկերությունը գրեթե կախում չունի տնտեսական ճգնաժամների բացասական հետևանքներից, ավելին՝ առկա է բարենպաստ հարկային դաշտ և պետական բազմակողմանի աջակցություն: Միաժամանակ, բաժնետոմսերի ձեռքբերումը նպաստում է ԼՂՀ-ին լուծել էներգետիկ անվտանգության և անկախության խնդիրներ, բացել լրացուցիչ աշխատատեղեր: Բացի այդ, «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ-ի բաժնետոմսերում ներդրումը գործարար համագործակցություն է: Այսինքն՝ այն նվիրատվությունից տարբերվում է նրանով, որ բաժնետոմսերում ներդրումը հանդիսանում է աջակցություն ԼՂՀ-ին տնտեսության բարգավաճմանն ու զարգացմանը՝ միաժամանակ ապահովելով կայուն եկամուտ ստանալու հնարավորություն:

#### **5. Ի՞նչ քայլեր են ներկայումս ձեռնարկվում «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ-ի բաժնետոմսեր գրավիչ դարձնելու ուղղությամբ**

«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ-ն բաժնետոմսերի առաջին տեղաբաշխումից հետո 2009 թվականի համար բաժնետերերին շահութաբաժին է վճարել անվանական արժեքի 10%-ի չափով (մեկ բաժնետոմսին 100 դրամ գումարի չափով): Բացի այդ, Ընկերությունը միջոցառումներ է իրականացնում բաժնետերերի իրավունքների պաշտպանության և թափանցիկ գործունեություն իրականացնելու ուղղությամբ՝ այսպես, Ընկերությունը հաստատել է բաժնետերերի ընդհանուր ժողովի, տնօրենների խորհրդի, վերստուգող հանձնաժողովի կանոնակարգերը: Ընկերությունը մշակել և հաստատել է շահութաբաժնային քաղաքականություն, որի շրջանակում Ընկերությունը պարտավորվել է յուրաքանչյուր տավա շահույթի առնվազն 20%-ը վճարել որպես շահութաբաժին: Բացի այդ, Ընկերությունը ընտրել է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ին որպես «ՆԱՍԴԱԶ ՕԷՍԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ֆոնդային բորսայում բաժնետոմսերի շուկա ստեղծող, որը ներդրողներին հնարավորություն տալիս ցանկացած պահին գնել և վաճառել բաժնետոմսեր:

#### **6. Ինչպե՞ս ձեռք բերել կամ վաճառել «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ-ի բաժնետոմսեր**

Եթե համագործակցում եք որևէ բրոքերային ընկերության կամ բանկի հետ, ապա կարող եք դիմել նրան՝ համապատասխան հայտ ներկայացնելու միջոցով, և նա Ձեզ համար ֆոնդային բորսայից կգնի կամ կվաճառի «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ-ի բաժնետոմսեր: Բրոքեր չունենալու դեպքում կարող եք ուղղակիորեն դիմել շուկա ստեղծողին («ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ): Որպես շուկա ստեղծող՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ»-ը, Ձեզ հնարավորություն է տալիս գնել և վաճառել ընկերության բաժնետոմսերը ժամանակի ցանկացած պահի՝ ապահովելով բարձր իրացվելիություն: ԼՂՀ քաղաքացիները կարող են օգտվել «Արցախ բանկ» ՓԲԸ-ի համապատասխան ծառայություններից, որպես՝ ԼՂՀ-ի ամենալայն ցանց ունեցող բանկի: